



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF LABOR & SOCIAL
AFFAIRS OF ARMENIA



ԱՄՆ ՄՁԳ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻ

USAID SOCIAL PROTECTION
SYSTEMS STRENGTHENING

ԱՆՀԱՊԱՂ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
Մարտի 23, 2007թ.

Հանրային ինֆորմացիա՝ (+37410) 542 610
Էլեկտրոնային փոստ՝ info@spss.am

ՍՊՀՀ մամուլի թողարկում 2007-1

ՍԿՍՎԵԼ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ: 2007 թ. մարտի 23-ին՝ ժամը 11:00-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Աղվան Վարդանյանը և ԱՄՆ դեսպանատան գործերի հավատարմատար Էնթոնի Գոդրին հայտարարեցին ԱՄՆ ՄՁԳ 2006-2011 թթ. Սոցիալական Պաշտպանության Համակարգերի Հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի գործունեության սկիզբը: ՍՊՀՀ-ն առաջատար նախագիծ է՝ ուղղված Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի հզորացմանը:

Այդ իրադարձությունը հնարավոր դարձավ շնորհիվ համագործակցության պայմանագրի, որը վերջերս ստորագրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի առաջին փոխնախարար Արայիկ Պետրոսյանի և ԱՄՆ ՄՁԳ-ի Սոցիալական Պաշտպանության Համակարգերի Հազորացման ծրագրի միջև, որն իրականացվելու է The Services Group, Inc. կազմակերպության կողմից, որը ներկայացնում էր Հայաստանյան գրասենյակի տնօրեն՝ դոկտոր Էյմի Ռեմը:

ԱՄՆ ՄՁԳ-ի ՍՊՀՀ ծրագիրը ԱՄՆ կառավարության կողմից՝ ԱՄՆ ՄՁԳ-ի միջոցով Հարավային Կովկասում մինչ օրս շնորհված սոցիալական բարեփոխումների խոշորագույն պայմանագրերից մեկն է, որը պետք է օգնի բարելավելու Հայաստանի կառավարության ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները սոցիալական պաշտպանության ոլորտում, ինչպես նաև զարգացնելու սոցիալական ծառայություններ մատուցող ոչ կառավարական կազմակերպությունների կարողությունները:

Ծրագիրը տրամադրվում է տեխնիկական օժանդակություն սոցիալական պաշտպանության չորս կարևորագույն ոլորտներում, այն է՝ սոցիալական ապահովագրությունը, զբաղվածության ծառայություններ, աշխատավայրի ապահովությունն ու աշխատանքային օրենսգրքի գործադրումը և սոցիալական աջակցության ծրագրեր բնակչության խոցելի խմբերի համար: Ծրագրի նպատակն է հեշտացնել քաղաքացիների անցումը դեպի ինքնաապահովում՝ միաժամանակ նվազեցնելով պետության օգնությունից նրանց կախվածությունը կենսական կարիքներ բավարարելու առումով: «Ծրագրում ընդգրկված մի շարք յուրօրինակ քաղաքական սեր թույլ կտան առավելագույնի հասցնել փոխազդեցությունը աշխատանքի շուկայի և սոցիալական պաշտպանության միջև», ընդգծել է դ-ր Էյմի Ռեմը:

Իր խոսքում ԱՄՆ գործերի հավատարմատար Էնթոնի Գոդրին ասել է. «Այդ ծրագիրը Հայաստանի կառավարության ևս մեկ կարևոր քայլ է իր քաղաքացիների սոցիալական պաշտպանության համակարգերն արդիականացնելու ուղղությամբ: Մենք արդեն իսկ մեծ համատեղ աշխատանք ենք կատարել՝ համարյա 20 միլիոն դոլարի վերջին վեց տարվա ընթացքում: Սակայն դեռ շատ անելիքներ կան սոցիալական պաշտպանության հիրավի անընդհատական համակարգ ստեղծելու համար»:

ԱՄՆ ՄՁԳ ՍՊՀՀ ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, այցելեք www.usaid.am/ կամ <http://www.mss.am/>: